



ՄԱՆԿԱԿԱՆՔԻ ԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ՓԵՏՐՎԱՐԻ
2025 թ.
№ 2 (1139)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաբերթ • հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱԼԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մեր լեզուն մենք ենք, որ կանք

1999 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակեց Մայրենի լեզվի միջազգային օր՝ ի նպաստ լեզուների իրավունքների ճանաչման և գործածության աջակցման:

Հայաստանում Մայրենիի օրը նշվում է 2008 թվականից, բայց արդյո՞ք յուրաքանչյուր հայ հետևորդներ է անում՝ ինչո՞վ է նպաստում մեր լեզվի մաքրությանը:

Գաղտնիք չէ, որ ազգի ինքնությունը պայմանավորված է լեզվով, որով նա առանձնանում է այլ ազգերից: Ի՞նչ է լեզուն՝ լեզուն մեր հայրենիքն է, որին ամենօրյա ուշադրություն է պետք և հոգածություն:

Մեզին յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն զգա լեզվի պահպանման և անաղարտության համար, որպեսզի կարողանա մաքուր ու անաղարտ փոխանցել սերունդներին. «Լիակատար կյանքով ապրելու համար մայրենի լեզուն ոչ միայն պետք է սիրել աչքի լույսի պես, այլև այն իմանալ անսխալ, խորապես: Ամեն մի սերունդ իր ժողովրդի լեզուն՝ որպես գործիք, որպես զենք, հղկում է, կատարելագործում և հարստացնելով փոխանցում հաջորդ սերնդին: Այդպես անենք և մենք. սիրենք, կատարելագործենք և հարստացնենք մեր հայրենի գանձը՝ մեր լեզուն», - ասում է Ստեփան Զորյանը:

Երիցս ճիշտ խոսքեր, որ մեզ համար ամենօրյա ուղեցույց պիտի լինեն և կարգախոս:

«Հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն և ու հավատը. թե սրանց էլ կորցնեք, էլ ո՞նց պիտի ասեք, թե որ ազգիցն եք...»

Ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, համա ձեր լեզուն, ձեր հավատը ամուր բռնեցեք...»:

Խաչատուր Աբովյան

Սիրենք Մայրենի լեզուն և պահենք այն աչքի լույսի պես:

Հատ ՄԱՀՅԱՆ

Մեր լեզուն

Մեր լեզուն մեր խիղճն է դա, Սուրբ հացը մեր սեղանի, Մեր հոգու կանչն է արդար Ու համը մեր բերանի: Մեր լեզուն ծուխն է մեր տան, Մեր կշիռն աշխարհի մեջ, Նա աղն է մեր ինքնության, Եության խորհուրդը մեր: Մեր լեզուն արյունն է մեր, Արյունից ավելի թանկ, Մեր բուրմունքն ու գույնն է մեր, Մեր լեզուն մենք ենք որ կանք: Նա պիտի մեր առաջին Ու վերջին սերը լինի, Ի՞նչ ունենք էլ աշխարհում, Որ այսքան մերը լինի:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ

ՌԵԿՏՈՐՆ ԸՆԴՈՒՄՆԵՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ



Հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձևաչափով՝ մեր օրյա դպրոցի, ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ հարցադրումներով. Սրբուհի Գևորգյանը հույս հայտնեց, որ աշակերտների հետ հետաքրքիր երկխոսությունը կշարունակվի այլ ձևաչափերով ևս՝ վիկտորիաններ, վարպետաց դասեր:

«Վարդանանք» կրթահամալիրի տնօրեն Շուշանիկ Զաքարյանը, որը նաև Մանկավարժական համալսարանի շրջանավարտ է, շնորհակալություն հայտնեց բովանդակալից հանդիպման համար՝ չթաքցնելով հետաքրքիր ու պարտավորեցնող է հյուրընկալվել 100-ամյա պատմություն ունեցող բուհում:

Նա կարևորեց, որ աշակերտները դեռ փոքրուց ծանոթանում են կրթական տարբեր կառույցների գործունեությանը, վաղ տարիքից կողմնորոշվում մասնագիտական ընտրության հարցում, ինչպես նաև նրանց մեջ ձևավորվում է գիրք կարդալու և նվիրելու կարևոր մշակույթը:

Նշենք, որ հանդիպումն ընթացավ օրվա խորհրդին համահունչ՝ կողմերը միմյանց նվիրեցին գեղարվեստական և մասնագիտական գրականություն:

«Վարդանանք» կրթահամալիրի ներկայացուցիչները այցելեցին նաև բուհի Պատմության թանգարան, ապա ձայնագրվեցին համալսարանական ռադիոյում՝ Ֆամայում: Աշակերտները հնարավորություն ունեցան հանպատրաստից հաղորդման ձայնագրության մասնակցել և իրենց լսել եթերում:

Մարին ԱՂԵՎՅԱՆ

«Վարդանանք» կրթահամալիրի աշակերտական խորհուրդը՝ տնօրեն Շուշանիկ Զաքարյանի ղվապետությամբ, այսօր Մանկավարժական համալսարանում էր. կրթական կառույցի ներկայացուցիչները բուհում էին Գիրք նվիրելու օրվա առիթով:

Սաների հետ հանդիպման ընթացքում ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց անակնկալ այցն ու ընդգծեց՝ Մանկավարժականի համար առաջնահերթություն է բուհ-դպրոց կապը. այստեղ կարևորում են, պատրաստ են լսել աշակերտական համայնքի կարծիքը, զնահատանները, դասապրոցեսի վերաբերյալ նրանց առաջարկները:

Սրբուհի Գևորգյանը նշեց՝ այս պահին էլ բուհում ընթանում են մի շարք գործընթացներ՝ մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման, դասավանդվող նյութերի բարելավման ուղղությամբ, իսկ օրվա հանդիպումը՝

նոր ու կարևոր առաջարկներով, կարող են լրացնել այդ շարքը:

Բժշկից մինչև դիզայներ, ծրագրավորողից մինչև բիզնեսմեն. մասնագիտության ընտրության վերաբերյալ Մանկավարժականի ռեկտոր Սրբուհի Գևորգյանի հարցադրմանը տրված պատասխանները տարբեր են, սակայն դրանց միավորում են ազգի, պետության համար կարևոր և որակյալ մասնագետ լինելու ընկալումը:

Ռեկտորը նշեց՝ Մանկավարժականում պատրաստում են ուսուցչական կադրեր. բուհի տիրույթում կրթության ոլորտն է, իսկ թվարկված բոլոր մասնագիտությունների հաջողությունները պայմանավորված են հենց ուսուցչական մասնագիտական որակավորման կարողություններով. «Ինչ մասնագիտություն էլ ընտրեք՝ միևնույն է բոլորին կրթողն ու մասնագիտական ոլորտում ուղղորդողը ուսուցիչն է», - նշեց Սրբուհի Գևորգյանը:

□ Իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է, նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառերի կազմելու դյուրություններով:

Ֆրեդերիկ Ֆեյդի

□ Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնած լեզու է, բարձունքների և խորությունների լեզու:

Հայոց լեզու, դու մեր անկողուպտելի գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, զորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքը, դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին:

Ավետիք Իսահակյան

□ Հայ լեզուն է այն սարսափելի ուժը, որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանը դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը:

Միքայել Նալբանդյան

□ ...Իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է, նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով:

Ֆրեդերիկ Ֆեյդի (Ֆրանսիացի հայագետ)



ԾԻԳ-ի փորձագետների խումբը համալսարանում էր

Բուհում ակտիվ ընթանում են «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի համալսարան աշխատանքները՝ ԶՊՄԳ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում:

Ծրագիրը նպատակաուղղված է մանկավարժական կրթության որակի բարձրացմանն ու արդիականացմանը, ինչպես նաև ստեղծելու միջավայր, որտեղ համադրվում են ուսուցումը, հետազոտությունները և ստեղծագործական գաղափարների կիրառումը:

ԶՊՄԳ-ում անցկացվեց հերթական մշտադիտարկումը, որի ընթացքում «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի փորձագետների խումբը ծանոթացավ կատարված և ընթացիկ աշխատանքներին, լաբորատորիաների հագեցման գործընթացին:

ԶՊՄԳ մասնագետների հետ տեղի ունեցավ նաև քննարկում՝ կենտրոնի հագեցման տեխնիկական և գիտահետազոտական բաղադրիչների, արդյունավետ կառավարման մոդելների կիրառման, կրթական ծրագրերի մոդառարական ուղղությունների, ուսանողների և երիտասարդ մասնագետների զարգացման հեռանկարների վերաբեր-



յալ: Նշենք, որ մասնագետների և փորձագետների համագործակցությունն ուղղված է լավագույն փորձի փոխանակմանը, աշխատանքային գործընթացի առավելագույն արդյունավետ կազմակերպմանն ու կենտրոնի նպատակային ոլորտների որակյալ զարգացմանը:

Իր տեսակով եզակի այս կենտրոնը հնարավորություն կտա ԶՊՄԳ-ում ստեղծել միջավայր, որտեղ ուսանողներն ու մանկավարժները միասին կիրականացնեն գիտահետազոտական և

կրթական ծրագրեր, կնշակվեն մեթոդաբանություններ և գործիքներ, որոնք կնպաստեն ժամանակակից դպրոցում ԲՏԾՄ առարկաների ուսուցման որակական բարելավմանը:

Ի դեպ, ներկայումս ընթացքի մեջ է նաև «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի ռազմավարական զարգացման հայեցակարգի և կանոնակարգերի մշակման գործընթացը:

Կենտրոնի ռազմավարական զարգացման կարևոր բաղադրիչն է միջազ-

գային համագործակցությունը. ընթանում է կենտրոնի բովանդակային մասի մշակման աշխատանքային խմբի ձևավորումը, իսկ առաջիկայում մասնագետները կվերապատրաստվեն Իսպանիայի Վալյադոլիդի համալսարանում:

Մանկավարժականում վստահ են՝ եվրոպական հաջողված փորձին ծանոթանալը թույլ կտա ներմուծել լավագույն մեթոդներն ու գործիքները, որոնք հետագայում կտեղայնացվեն ուսանողների և դասախոսների ուսումնական գործընթացում, իսկ միջազգային հեղինակավոր հաստատությունների հետ գիտակրթական կապերի ամրապնդումը կնպաստի համալսարանի վարկանիշի բարձրացմանն ու Հայաստանի կրթության ոլորտում՝ առաջարկելով ժամանակակից, կիրառական և բարձրորակ ԲՏԾՄ կրթություն:

Կենտրոնի գործունեությունը ոչ միայն կբարելավի մասնագիտական կրթության որակը, այլև կնպաստի ազգային կրթական համակարգի ձևավորման մոր մակարդակի, որտեղ ապագա մանկավարժները կլինեն առավել մրցունակ, ստեղծագործող և գաղափարներով հարուստ մասնագետներ:

Ապագա դիմորդների գիտելիքների փորձնական սպուզում

ԶՊՄԳ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության, Դիմորդների ներգրավման բաժնի և Ուսանողական խորհրդի ջանքերով բուհի ներկայացուցիչներն ու ապագա ուսուցիչներն այցելեցին Տավուշի մարզի մի շարք բնակավայրեր՝ Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան և Բերդ: Այցի հիմնական նպատակն ավագ դպրոցների 10-րդ դասարանցիների համար կազմակերպված մաթեմատիկա առարկայից ապագա դիմորդների գիտելիքների փորձնական ստուգումն էր:

ԶՊՄԳ ներկայացուցիչները նախ ներկայացրին ծրագրի կարևորությունը, բացատրեցին, թե ինչու է մաթեմատիկան ընտրվել որպես առաջնային առարկա. այն ընկած է բազմաթիվ մասնագիտությունների հիմքում և զարգացնում է տրամաբանական մտածողությունը: Ստուգումն իրականացվեց թեստային եղանակով. 10-րդ դասարանցիները պետք է պատասխանեին տարբեր բարդության խնդիրների: Դիտարկվեց նաև, ինչպես են աշակերտները կողմնորոշվում ժամանակի և խնդիրների լուծման ռազմավարության մեջ

Մաթեմատիկայից ստացված արդյունքները վկայում են՝ ուսումնասիրությանը մասնակցած ավագ դպրոցների սովորողները պատրաստ են ընդունելության քննությունների: Բացի այդ, փորձնական ստուգումն ուսուցիչներին և դպրոցներին թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել, թե որտեղ են աշակերտները դժվարանում, ինչ ուղղությամբ է պետք խորացնել գիտելիքները և բուհերը որքանով են պատրաստ ճանաչել աշակերտների հավաքած կրեդիտները:

Նշենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության

հրամանով սահմանվել է Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը, որի նպատակն է հանրակրթությունը մոտեցնել եվրոպական չափանիշներին, հնարավորություն ստեղծել սովորողների համար արդեն դպրոցական փուլում ձեռք բերել կրեդիտներ, որոնք հետագայում կարող են տեղափոխվել կամ ճանաչվել բարձրագույն կրթության հաստատություններում:

ԶՊՄԳ-ն, որդեգրելով այս մոտեցումը, նախապես համաձայնեցրել էր ավագ դպրոցների հետ տվյալ փորձնական ստուգման անցկացման ձևաչափը, սահմանել գնահատման չափանիշներ և ծրագրել առաջիկա փուլերը:

Ի դեպ, նախատեսված է հայոց լեզվի գնահատման փուլը, որի ստուգման արդյունքները ևս կվերլուծեն ԶՊՄԳ մասնագետները, որպեսզի ամբողջական պատկերացում ստեղծվի հավանական դիմորդների պատրաստվածության մակարդակի վերաբերյալ:

ԿԶՆԱԿ-ի հետ համագործակցությամբ իրականացվող գործընթացի վերջնական նպատակն ուսումնական հաստատությունների և Մանկավարժական համալսարանի միջև համագործակցության պաշտոնական հաստատումն է: Երկու առարկաների արդյունքների ամփոփումից հետո նախատեսվում է կնքել համագործակցության պայմանագիր, որով հանրակրթական դպրոցների տրամադրած կրեդիտները պաշտոնապես կընդունվեն կամ կճանաչվեն ԶՊՄԳ-ում. «ԶՊՄԳ-ն փորձում է այս համակարգի ներդրմամբ ապահովել, որ պոտենցիալ դիմորդները ստանան առավել օբյեկտիվ



և հավաստիապես գնահատականներ: Այն աշակերտները, որոնք հստակ որոշել են իրենց ապագա մասնագիտությունը, կարող են ավելի արագ ներգրավվել համալսարանական միջավայրում: Այս քայլը կարևոր է նաև կրթական մակարդակի բարձրացման, համաչափ զարգացման և անընդհատ վերապատրաստումների համար»,-ասաց ԶՊՄԳ Դիմորդների ներգրավման բաժնի պետ Լյուվա Հարությունյանը:

Նա հավելեց, որ այցելությունը Տավուշի մարզ ոչ միայն կրթական մակարդակի փորձնական ստուգման միջոցառում էր, այլև ոլորտի շարունակական բարեփոխումների ու համագործակցությունների ամրապնդման մոր քայլ. «Արդյունքները ցույց են տալիս, որ մարզի երիտասարդությունն ունի բավարար նե-

րուժ լավագույն համալսարաններում կրթություն ստանալու համար: Այնուամենայնիվ, կարևոր է հետագա հետևողական աշխատանքը, որպեսզի կրեդիտային համակարգի ներդրումը լիովին դրական ազդեցություն ունենա դպրոցի և բուհի կապի ամրապնդման վրա: Տավուշի մարզում ծրագրի հաջող ներդրումը կարող է դառնալ նախադեպ մյուս մարզերի համար, որտեղ նույնպես կարելի է կիրառել նմանատիպ փորձնական ստուգումներ և հաստատել արդյունավետ կրթական համագործակցություն»:

Տավուշի մարզում տեղի ունեցած կրթական միջոցառումը հերթական անգամ ընդգծեց Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետևողական ջանքերը կրթության որակի բարելավման ուղղությամբ:



«Բոլոր ռեսուրսներն ուղղել դեպի դպրոց»

Հայաստանի հոգեբանամանկավարժական գիտությունների ակադեմիայի, ՀՀՄՄ-ի և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի նախաձեռնությամբ կայացավ «Արդի մանկավարժական գիտությունների հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով 2-րդ գիտաժողովը:

Գիտական ձեռնարկի նպատակն էր վերհանել հանրակրթության, բուհական մանկավարժության հիմնախնդիրներն ու զարգացման միտումները, մասնավոր մեթոդիկաների դասավանդման առանձնահատկությունները:

ՀՀՄՄ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը նկատեց, որ գիտաժողովն այս անգամ նվիրված է բնագիտական ոլորտին. ակադեմիան առանձնացրել է կրթության, ուսուցման, մեթոդաբանության հիմնախնդիրների հետ կապված կարևորագույն հարցեր, որոնք առնչվում են մեր երկրի կրթական համակարգի, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտի առջև ծառայած հիմնախնդիրներին:

Նա հույս հայտնեց, որ զեկույցներում անդրադարձ կլինի հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի բովանդակության, դպրոց-բուհ և կրթության ոլորտում առկա ռազմավարական խնդիրների հոմոգենությանը, միջգիտակարգայնությանն ու նրանց հետազոտությունների փոխներգործմանն ու մեթոդաբանությանը, որոնց վերաբերյալ կան բազմաթիվ խնդրահարույց ի-



րավիճակներ:

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ռեկտոր Էդվարդ Սանդրյանը նկատում է՝ աշխարհում տեղի են ունենում լուրջ փոփոխություններ, որոնք պայմանավորված են տեխնոլոգիական հեղափոխությամբ: Նրա դիտարկմամբ, եթե մեր վերաբերմունքը չփոխվի մանկավարժության, մասնավորապես՝ բնագիտության վերաբերող մանկավարժության նկատմամբ, մեր երկիրն այդ զարգացումներից հետ կմնա ոչ թե մի քանի, այլ մի քանի հարյուր տասնամյակով: Ուսումնասիրություններն են փաստում՝ շատ քիչ են այն երիտասարդները, որոնք պատրաստ են ընտրել բնագիտությունը ներկայացնող մանկավարժական մասնագիտություններ. դպրոցներում աշխատելն այսօր շահեկան չէ:

Էդվարդ Սանդրյանը դրանում լուրջ վտանգ է տեսնում. եթե դպրոցներում չկարողանանք կրթությունն իրականացնել ժամանակակից տեխնոլոգիաներով, նորագույն մեթոդներով, գիտելիքներով՝ ապագայում խնդիրներից խուսափել հնարավոր չի լինի: Վատահեցնում է՝ բոլորիս գերնպատակը պետք է լինի կանգ առնել և ռեսուրսներն ուղղել դեպի դպրոցը, մանկավարժությունն ու կրթությունը՝ բնագիտության ոլորտին՝ հատկապես:

Հայաստանի հոգեբանամանկավարժական գիտությունների ակադեմիայի նախագահ Էդուարդ Ղազարյանը, սակայն, գիտաժողովի օրինակով է փաստում՝ բնական գիտությունների նկատմամբ հետաքրքրությունը երիտասարդների շրջանում մեծանում է. աշխատանքներն այս ուղղությամբ

պետք է շարունակել: Բանախոսը նկատում է՝ ի տարբերություն անցյալի, այսօր դասավանդող ուսուցիչը սեփական ճանապարհն է անցնում, այնինչ դասավանդման վերաբերյալ պետք է լինի համակարգված մոտեցում:

ԳԱԱ ակադեմիկոսն իր խոսքում կարևորեց բուհական մանկավարժությունը, որը տարեցտարի երկրորդ պլան է մղվում: Նա դա պայմանավորեց 21-րդ դարում բարձր տեխնոլոգիաների զարգացմամբ և մի շարք նոր ուղղությունների ի հայտ գալով, որոնք յուրացնելու համար կարևորեց պինդ մարմնի քվանտային տեսությունն ու ներկայացրեց դրա մեթոդներն ու բովանդակությունը:

Լիագունար միստում զեկույցներ ներկայացվեցին նաև քիմիա դասավանդելիս սովորողների գիտական մտածողության, ինչպես նաև աշակերտների տրամաբանական և ասոցիատիվ մտածողության զարգացման վերաբերյալ:

Աշխատանքները շարունակվեցին Մասնավոր մեթոդիկաների դասավանդման առանձնահատկությունները՝ ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն մասնախմբերում ներկայացված զեկույցներով: Մեր երկրի գիտակրթական տարբեր կառույցների ներկայացուցիչներ ներկայացրին իրենց հետազոտական աշխատանքները և ուսումնասիրությունները՝ վերհանելով ոլորտային մի շարք հիմնախնդիրներ:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Դպրոցականներն այցելեցին Մանկավարժական



ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 7գ դասարանի աշակերտները՝ դասղեկ Լիլիթ Իսրայելյանի և հայոց լեզու և գրականություն առարկայի ուսուցչուհի Գոհար Ղազարյանի գլխավորությամբ, հյուրընկալվեցին Մանկավարժական համալսարանում:

Այցի նպատակը բուհ-դպրոց համագործակցության խորացումն էր, աշակերտներին համալսարանական միջավայրին ծանոթացնելը, մասնագիտական կողմնորոշմանը նպաստելն ու դպրոցներում նախագծային աշխատանքների իրականացման

գործում աշակերտներին աջակցություն ցուցաբերելը:

ՀՀՄՄ հեռուստառադիոլրագրության ամբիոնի դոցենտ Դիանա Մարկոսյանը աշակերտներին ներկայացրեց բուհի մասնագիտությունները, առանձնահատկությունները, առավելությունները, ծանոթացրեց առաջին համալսարանական ռադիոյի՝ Ֆամայի գործունեությանը, իսկ լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Սիմոն Հովհաննիսյանը լրագրության մասին հակիրճ ակնարկ ներկայացրեց տեսասահիկի միջոցով:

Աշակերտներն ուղղեցին իրենց հուզող հարցե-

րը մեդիագրագիտության, կեղծ տեղեկատվության հայտնաբերման, դրանից խուսափելու ուղիների մասին: Ապա ունեցան ծայնագրվելու առաջին փորձը:

Աշակերտներն՝ ուսուցչուհու օգնությամբ, իրականացրել էին հետազոտական աշխատանք Հայաստանում ապրող աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ եգիպտացիների հարուստ մշակութային ժառանգության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նրանց ունեցած ձեռքբերումների մասին տեղեկանալու նպատակով: Իրենց կատարած աշխատանքը նրանք հաղորդման տեսքով ծայնագրեցին, որը եթե հեռարձակվեց փետրվարի 17-ին:


Մանկավարժական համալսարանի ռադիո Ֆամայի շնորհիվ աշակերտների աշխատանքը չի մնա միայն դպրոցի պատերի ներսում, այն կհնչի աշխարհի ավելի քան 150 երկրում, որտեղ կտեղեկանան ինչպես Հայաստանում եգիպտական համայնքի կյանքին ու գործունեությանը, այնպես էլ դպրոցականների քննադատական, վերլուծական մտքին և կարողություններին:

Հանդիպման ավարտին աշակերտներն այցելեցին նաև ՀՀՄՄ Պատմության թանգարան, և խոստացան անպայման վերադառնալ, որովհետև ժամանակի սղության պատճառով բավականին հարցեր մնացին անպատասխան:

«Այսպիսի նախաձեռնությունները երկկողմ արդյունավետություն ունեն՝ վաղ տարիքից աշակերտների մոտ սերմանում են սեր բարձրագույն կրթության, հետազոտական, վերլուծական աշխատանքների նկատմամբ, իսկ համալսարանն էլ ամրապնդում է կապը դպրոցների հետ, որոնց համար պատրաստում է վաղվա ուսուցիչներին»,- վստահեցրեց ՀՀՄՄ հեռուստառադիոլրագրության ամբիոնի դոցենտ Դիանա Մարկոսյանը:



ՏԵՐՅԱՆԸ ՄԵՋ ՀԵՏ, ՏԵՐՅԱՆԸ ՄԵՐ ՄԵՋ, ՏԵՐՅԱՆԸ...



140



ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՅ

Մեր սրտի պոետ, մեր ոգու բանաստեղծ

Փետրվարի 9-ին լրացավ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի ծննդյան 140-ամյակը: Տարին հրեթյանական է, և տարբեր հաստատություններում տարբեր ձևաչափերով նշվում է մեծ բանաստեղծի ծննդյան տարեդարձը:



Վահան Տերյանի անվան N 60 դպրոցը և անմասն չմնաց: Փետրվարի 12-ին դպրոցում անցկացվեց «Տերյանը մեզ հետ, Տերյանը մեր մեջ, Տերյանը...» խորագրով միջոցառում: Ասմունք, երգ, պար, հուշեր, ոգեկոչող խոսքեր...


Դպրոցի աշակերտները մեծ պատվով և հպարտությամբ են կրում «տերյանցիներ» անունը՝ պահելով և զարգացնելով մեծ բանաստեղծի, հասարակական-քաղաքական գործչի արժեքներն ու գաղափարները: Ծնունդի շնորհավոր, մեր սրտի պոետ, մեր ոգու բանաստեղծ:

Գոհար ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Վ. Տերյանի անվան N60 հիմնական դպրոցի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի



ՈՒՄԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Ֆուտբոլային երեխա յուրահատուկ է, և յուրաքանչյուրի աստղը կազմում է իմ ամենամեծ ձեռքբերումն է



ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության բաժնի բակալավրիատն ավարտելուց հետո ես ընտրեցի մի ուղի, որը ոչ միայն մասնագիտություն է, այլև առաքելություն: Յուրաքանչյուր մասնագիտություն ունի իր ճանապարհը, իր դժվարություններն ու իր նվաճումները: Ինձ համար մանկավարժությունն ավելի քան մասնագիտություն է. այն կոչում է, որը ձևավորում է ոչ միայն երեխաների ապագան, այլև ուսուցչի անհատականությունը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանելն ինձ հնարավորություն տվեց խորությամբ ուսումնասիրել տարրական մանկավարժության և մեթոդիկայի գաղտնիքները: Սովորելու տարիները լի էին նոր բացահայտումներով, հաջողություններով ու մարտահրավերներով, որոնք ձևավորեցին ինձ՝ որպես մասնագետ և անձնավորություն: Ինձ համար հատկապես կարևոր էր տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունը, որը հասանելի դարձավ պրակտիկայի միջոցով: Դասավանդման յուրաքանչյուր փորձ ինձ մի քայլ առաջ էր տանում՝ խորացնելով կրտսեր դպրոցականների հոգեբանությունը հասկանալու, նրանց զարգացման առանձնահատկությունների և արդյունավետ մեթոդների կիրառման անհրաժեշտության մասին գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու մեջ:

Ուսման ընթացքում, անշուշտ, բախվել եմ բազմաթիվ դժվարությունների՝ թե՛ ակադեմիական, թե՛ հոգեբանական առումով: Սակայն հենց այդ դժվարություններն էին, որ ստիպեցին ինձ ավելի մեծ համառությամբ աշխատել ու կատարելագործվել: Փորձի, գիտելիքների ու հետազոտությունների համադրությունն ինձ օգնեց ոչ միայն հաղթահարել առկա խոչընդոտները, այլև ձեռք բե-

րել յուրահատուկ մեթոդներ՝ դասավանդման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Առաջին մեծ մարտահրավերը կրտսեր դպրոցականների հետ աշխատելու պատասխանատվությունն էր. նրանց յուրաքանչյուր հարց, յուրաքանչյուր սպասում պահանջում էր խորը պատրաստվածություն և հոգատարություն: Բացի այդ, ժամանակի կառավարումը, նոր մեթոդների յուրացումը, բազմազանության վրա հիմնված դասավանդումը պահանջում էին ինքնակատարելագործում ու անընդհատ սովորելու պատրաստակամություն: Այդ դժվարություններն ինձ սովորեցրին լինել ավելի կազմակերպված, համբերատար և ստեղծագործ:

Մագիստրատուրայում սովորելը ես համարում եմ մանկավարժի մասնագիտական զարգացման կարևոր փուլ: Այն բացում է նոր հորիզոններ, խորացնում գիտելիքներն ու հնարավորությունն տալիս ուսումնասիրել մանկավարժության նորագույն մոտեցումները: Գաղտնիք չէ, որ մանկավարժությունը պահանջում է շարունակական աճ, ստեղծարարություն և աշակերտների անհատականությունը կարևորելու ունակություն: Այս տեսանկյունից՝ մագիստրատուրան ոչ միայն խորացնում է մասնագիտական հմտությունները, այլև օգնում է նոր հայացքներով մոտենալ ուսուցման գործընթացին, լինել նորարար ու արդյունավետ:

Այժմ «Այբ» տարրական դպրոցում աշխատում եմ որպես դասավար: Սովորողների հետ ամենօրյա աշխատանքն ինձ սովորեցնում է լինել ավելի զգայուն, ընկալել նրանց կարիքները, աջակցել նրանց թե՛ ուսման, թե՛ անձնային աճի հարցում: Հաշվի են առնում, որ յուրաքանչյուր երեխա յուրահատուկ է, և նրանց առաջընթացն իմ ամենամեծ ձեռքբերումն է:

Իմ կրթության ավարտին ձեռք բերած ամենակարևոր համոզմունքն այն է, որ մանկավարժությունը ոչ թե պարզապես մասնագիտություն է, այլ մի ճանապարհ, որը պահանջում է նվիրում, համբերություն և անսահման սեր երեխաների նկատմամբ: Ես համոզված եմ, որ յուրաքանչյուր մանկավարժ պետք է ձգտի մասնագիտական կատարելագործման, որպեսզի կարողանա լինել այն ուսուցիչը, ում հիշելու են տարիներ անց՝ ջերմությամբ ու երախտագիտությամբ:

ԱՆԻ ՍՄՐԱՅԱՆ
ՀՊՄՀ 2024-2025թթ. ուստարվա շրջանավարտ
«Այբ» տարրական դպրոցի ուսուցիչ
«Աբակու» կենտրոնի մենթալ փաթեթային մարզիչ

Կարևոր է, որ մեր առաքելության հանդեպ ապնիվ լինենք

Ողջույն, ես Աղունիկ եմ, 21 տարեկան: Ծնունդով Լոռուց եմ, և այն կյանքը, որով հիմա ապրում եմ, անգամ չէի պատկերացնի, որ այս տարիքում կզգամ ու կապրեմ: Ավարտել եմ Ալավերդու N 12 հիմնական և N 8 ավագ դպրոցները: Դեռ մանկուց մեծ սեր են ունեցել արվեստի նկատմամբ, այդ իսկ պատճառով հաճախել եմ երաժշտական դպրոցի քանոնի բաժինը: Իմ կյանքում մեծ դեր է ունեցել մահ «ՔՈԱՅ» Սմարթ կենտրոնը, որտեղ բացահայտել եմ կրթության ուժն ու նրա միջոցով աշխարհն ուսումնասիրելու հնարավորությունը: Չմայած իմ ակտիվ կյանքին՝ 12-րդ դասարանում դեռ չէի կողմնորոշվել, թե որ մասնագիտությունն ընտրեմ: Երկար մտորումներից հետո հաղթեց մարդասիրական ուղորդը, և ես ընդունվեցի Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի սուրդոմանկավարժության բաժին:

Իմ կյանքի ամենավառ շրջադարձային պահերից մեկը Երազմուս+ ծրագրին մասնակցելու հնարավորությունն էր: 3-րդ կուրսում համալսարանն ինձ հնարավորություն տվեց մեկ կիսամյակ սովորելու Չեխիայում: Շատերը վախենում են այս ծրագրից՝ վիզայի հարցերից, ընտանիքից ու հարազատներից կտրվելուց, նոր միջավայրում ամեն ինչ նորից սկսելու մտքից, բայց ես գիտեմ, որ ռիսկը հաջողության կեսն է: Ռիսկի դիմելով՝ մեկնեցի Չեխիա, որտեղ ոչ միայն նորովի ծանոթացա իմ մասնագիտությանը, այլև համոզվեցի, որ ճիշտ ուղու վրա եմ: Այդ փորձառությունն օգնեց ինձ էլ ավելի ամրապնդել մասնագիտական ու անձնական վստահության:

Վերադառնալուց հետո 4-րդ կուրսը ոչ միայն խորացրեց իմ սերը մասնագիտությանս նկատմամբ, այլև նորովի բացահայտեց ուսանողական կյանքը և ուսումնական գործընթացները: Ֆակուլտետի ՌԻՆ Նախագահ դառնալով սկսեցի ուսանողական կյանքին այլ տեսանկյունից նայել և գիտակցեցի, թե որքան բան կփոխվեր, եթե ուսանողները կրթությանը և ուսանողական գործունեությանն ավելի մեծ փորձ ու հոգատարությամբ վերաբերվեին:

2024 թվականի սեպտեմբերին ես կրկին հնարավորություն ստացա մասնակցելու Երազմուս+ ծրագրին՝ այս անգամ Պորտուգալիայում: Այդ երկիրն իմ



երազմունքների ցուցակում էր, և այնտեղ ուսումնառության ընթացքում ես էլ ավելի հստակ պատկերացրի իմ մասնագիտական ապագան, գտա այն ներքին հանգստությունը, որին բոլորս այդքան ձգտում ենք:

Այս ամենը պատահական չլիսեցի ընթերցողների հետ: Վերջին տարիներին շատերն են թերաթվորում կրթությունը և համալսարանական գիտելիքները, բայց ինչպես հասկացաք՝ կապ չունի, թե որտեղ ես, ով ես կամ որտեղից ես: Եթե կա երազանք, նպատակ և ձգտում՝ դառնալու լավ մասնագետ ու հայրենամեծ գործ անելու, ապա ամեն անհնարին թվացող բան հնարավոր կդառնա: Կարևոր է, որ մենք ինքներս մեր հանդեպ ու մեր առաքելության հանդեպ ազնիվ լինենք և երբեք չնեղացնենք մեր ներսի փոքրիկ Աղունիկին կամ որևէ մեկին, ով ուներ երազանք՝ դառնալու սիրված և պահանջված մասնագետ:

Միտելի՛ կրտսեր ընկերներ, սրտանց ցանկանում եմ, որ ուսանողական տարիները վայելեք ողջ հոգով, վայելեք յուրաքանչյուր պահը: Կրթվեք անդադար, զարգացեք, որպեսզի դառնաք մեր երկրին արժանի մասնագետներ, ովքեր կերտելու են այն հզոր ապագան, այն հզոր Հայաստանը, որի մասին բոլորս ենք երազում և որին ձգտում:

Աղունիկ ՀԱՍՐԱՐՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ



Գիրք նվիրելու օրվա ատրիպ

Գիրք նվիրելու գեղեցիկ տոնին այս տարի կմիանա նաև Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանը:

Ճգնաժամային իրավիճակների սպառնալիքը համաշխարհային համրության օրակարգում է դնում մշակութային ժառանգության պահպանման ուղիքում մի շարք հրատապ հարցեր:

2024 թվականին ԻԿՕՍ հայկական թանգարանների ազգային կոմիտեն, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի հետ կնքված համաձայնագրի շրջանակներում ստանձնեց «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում» ձեռնարկի և գործնական ուղեցույցի հայերեն թանգարանությունում ու հրատարակումը: Երկու գրքերի փաթեթը նախատեսվում է բաժանել 120-ից ավելի թանգարանների Երևանում և մարզերում, ինչպես նաև գրադարանների և գործընկեր կառույցների:



Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի նախագահ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի տնօրեն Ալվարո Գրիգորյանը խմբագրել է ձեռնարկն ու գործնական ուղեցույցը և կարծում է, որ Գիրք նվիրելու օրը մոր ձեռնարկը օգտագործողին տրամադրե-

լու լավագույն առիթն է: Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՍ Հայաստանի) ազգային կոմիտեի նախագահ Հայկ Սկրտչյանը կարևորեց օրը և սասց, որ սիրելի տոնը առիթ է ԻԿՕՍ Հայաստանի կողմից հրատարակված երկու կարևոր ձեռնարկ նվիրել Հայաստանի բոլոր թան-

գարաններին, գրադարաններին և ինստիտուտներին: «Առաջին օգնություն մշակութային ժառանգությանը ճգնաժամային իրավիճակներում» ձեռնարկը և գործնական ուղեցույցը համատեղ աշխատանքի արդյունք է, այն թարգմանվել է Մշակութային արժեքների վերականգնման և ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի թույլտվությամբ:

Հայկ Սկրտչյանն իր մտահոգությունը հայտնեց և վստահեցրեց՝ քաղաքաշտապանության ոլորտում նույնիսկ թանգարաններն ունեն շատ լուրջ խնդիրներ: Նա վստահ է, որ ներկա ձեռնարկը և գործնական ուղեցույցը կդառնան սեղանի գիրք թանգարանային ոլորտի աշխատողների համար:

Ամսվա վերջում արդեն հնարավոր կլինի հայերեն տարբերակը ներբեռնել: Նա շնորհակալություն հայտնեց Ալվարո Գրիգորյանին՝ գիրք խմբագրելու համար և իր գոհունակությունը հայտնեց Լոնդոնի մի թանգարանի փորձագետ ընկերներին, որոնք հոգացել են հրատարակության ծախսերը, ինչը մեկ տարվա ինտենսիվ դասընթացների արդյունքում է իրականացվել:

«Դաժո» ժողովրդական երաժշտական խմբի համերգը Մանկավարժականում

ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում օրերս կայացավ «Դաժո» ժողովրդական երաժշտական խմբի համերգը: ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի հովանավորությամբ կազմակերպված համերգին մասնակցում էին բուհի տարբեր բաժինների ուսանողներ:

Ուղ, դոթառ, կիթառ, դուշմե, սրինգ և նեյանբան, դափ, բանդիր, դիոլ, սանթուր և երաժշտական այլ գործիքներով կատարումներով հանդես եկան իրանցի երաժիշտներ Մեհդի Նոդեհին, Հասան Ռուհին, Սադեղ Նեսթաբին, Սադեղի Շադը և այլք:

Համերգի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել Իրանի ազգային նվագարաններին, իրանական երաժշտությանը:

Համերգի ավարտին ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոնի ղեկավար Մուհամմադ Ասադի Մովահեդին և ՀՊՄՀ երաժշտության ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը միմյանց շնորհակալություն հայտնեցին համերգի կազմակերպման և ուսանողներին մասնակցի դարձնելու համար:



ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ՏՈՆԵՐԸ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ. ՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայ Առաքելական Եկեղեցին ամեն տարի փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրվանից 40 օր հետո, նշում է քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տեառնընդառաջը:

Տրմդեզ, Տեառնընդառաջ, Տանդառեջ, Տնդալեջ, Տառնիջ-տառնիջ, Դառառառառ, Դոռոռո, Մելետ և բազմաթիվ այլ անուններով հայտնի տոնը հայ ժողովուրդը նշում է հազարամյակներ շարունակ:

Տեառնընդառաջի տոնը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: «Տեառնընդառաջ» անվանումը ստուգաբանվում է քրիստոնեական ավանդության մեջ:

Համաձայն նախնայաց օրենքի՝ ծննդաբերած կինը քառասուն օրական անդրանիկ զավակին պիտի տաներ տաճար, Աստծուն ընծաներ մատուցեր և օրհնություն ստանար: Հայ Առաքելական Եկեղեցու հաստատած կանոնների համաձայն, ութ օրականում մկրտում են մանկանը, իսկ 40 օրականում մայրը երեխայի հետ գալիս է տաճար, քահանան երեխային ընծայում է Աստծուն, իսկ մորը՝ մաքրագործում: Մարիամը քառասուն օրական Հիսուսին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով բարեպաշտ ծերունին,

ով Աստուծոց հրաման էր ստացել մահ չտեսնել, մինչև տեսներ աշխարհի ու մարդկության Փրկչին: Սուրբ Հոգով առաջնորդվելով՝ նա ճանաչում է Փրկչին և ընդառաջ է գալիս Հիսուս մանուկին: Այստեղից էլ «Տիրոջն ընդառաջ» արտահայտությունը:

Ըստ ժողովրդական ավանդության՝ Տեառնընդառաջի հիմնական ծեսը խարույկ վառելն էր և այդ խարույկի շուրջ տոնակատարությունը: Խարույկը վառում էին հիմնականում ցորենի հասկերից: Կրակի վառվելու ընթացքում կանայք սկստեղի վրա բերում էին Տեառնընդառաջի տոնական կերակրատեսակները՝ փոխինձը, չամիչը, աղանձը, ընկույզը, բոժոժ սիսեռը և պտտեցնում կրակի շուրջը, մի մասը բաժանում էին, մյուս մասը ներս տանում՝ երեկոյան խնջույքի համար: Նրանք պտտվում էին խարույկի շուրջը, և երբ բոցը ցածրանում էր, սկսում էին կրակի վրայով թռչել: Եթե կրակի վրայով ցատկելիս վառվում է հարսի զգեստի փեշը՝ ընդամենն անզուշություն է, իսկ եթե ընդհանրապես չեք հասցրել կրակ վառել, ցատկել վրայով, պետք չէ նեղարտել և սնուտի հարկադրությամբ տառապանք մինչև հաջորդ Տեառնընդառաջի տոնը:

Նախկինում խարույկի ծխի ուղղու-

յամբ կատարել են գուշակություններ. հետևելով ծխի ուղղությանը՝ որոշել են տարվա բերքառատությունը (եթե ծուխը թեքվել է հարավ կամ արևելք, ակնկալել են առատ բերք, իսկ եթե թեքվել է հյուսիս կամ արևմուտք՝ համարել են, որ երաշտ կլինի): Ծխի ուղղությամբ փորձել են գուշակել, թե որ կողմից է գալու հարսնացուն կամ փեսացուն: Տրմդեզի մոմերով կամ ջահերով հատուկ պար է եղել նորապսակների համար: Յոթ ամուսնական զույգեր մոմերով կամ ջահերով շրջապատել են պարող նորապսակներին՝ չարքերից պաշտպանելու համար, և նրանք պարել են այդ շրջանակի մեջ:

Հետաքրքիր սովորություն է եղել Մուսա լեռան շրջանի հայության շրջանում, որի մնացուկներն այժմ էլ կարելի է գտնել գյուղերում՝ մեծահասակների հիշողության մեջ, երբ տանտիկինը, բացելով դուռ ու լուսամուտ, քշում էր ձմեռ-շվոտը («շվոտ»-ը փետրվար ամսի արաբերեն բառի՝ շուբաթի աղավաղված ձևն է) և ներս հրավիրում գարուն-մարտը:

Հայ Եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին, երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է նախատոնակ: Այն ավելանում է Տերունի տոնի կախքը: Սո-

վորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի չորս ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության արարողությունը: Եկեղեցու կանթեղներից վերցված կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանշի:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ կրակն ունի հետևյալ խորհուրդները. «խարույկի հուրը բորբոքելով՝ Աստծո սիրո հուրն ենք խնդրում: Հեթանոսներն Աստծո պատիվը կրակին էին մատուցում, իսկ քրիստոնյաներս կրակը ծառայեցնում ենք Աստծուն: Ինչպես երբայցի մանուկները ծառի ուտերը ընծայեցին Քրիստոսին, այնպես էլ մենք կրակն ենք ընծայում:

Երկրորդ գալստյան ժամանակ հուրը պիտի գնա Տիրոջ առջևից, որպեսզի լուսավորի սրբերին և բարեպաշտներին, իսկ չարերին ու անհավատներին սատանայի հետ հավիտենական հրի դատապարտի»:

Վառվող մոմերը տուն տանելը և Եկեղեցու բակում վառվող խարույկն ըստ էության որևէ կապ չունեն մեր հեռավոր հեթանոս նախնիների կրակի >8



Տեառն ընդառաջի տոնը նշեցին նաև համալսարանական N 57 դպրոցում:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ...



➤7 պաշտամունքի հետ: Ժողովրդի մոտ ձևավորված այն հակասությունը, թե ե՞րբ է հարկավոր նշել Տեառնընդառաջը, բացատրվում է հետևյալ կերպ. փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցական կարգի համաձայն, օրը փոխվում է: Այսինքն, Տեառնընդառաջի կրակը վառում են փետրվարի 14-ին՝ ըստ եկեղեցական օրացույցի, թեև աշխարհիկ օրացույցով դեռ 13-ն է: Փետրվարի 13-ին կատարվում է նախատոնակ, իսկ արդեն փետրվարի 14-ի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, արդեն մի քանի տարի է, ինչ Տեառնընդառաջի Պատարագից հետո Հայոց եկեղեցիներում տեղի է ունենում նորապսակների օրհնության կարգ:

Ըստ ժողովրդական ավանդույթի՝ Տեառնընդառաջի օրը պարտադիր փոխայցելություններ էին կատարում խնամիները, նորահարս ունեցող ընտանիքին այցելում էին հարսի հարազատները: Որպես կանոն, խարույկի դեզը պատրաստում էին նորափեսաները: Տեառնընդառաջի տոնին էր, որ նորափեսան պսակից հետո առաջին անգամ հանդիպում էր աներոջ հետ: Այդ պատճառով ժողովրդական ավանդության մեջ Տյառնընդառաջն ընկալվել է որպես փեսայի՝ աներոջ տուն այցելելու տաբուս վերացնելու հիմնական առիթ: Նախկինում պարտադիր կարգի համաձայն՝ նորապսակ երիտասարդներն իրավունք չունեին հարսի ծնողների և հատկապես աներոջ հետ հանդիպել: Եվ Տրնդեգի կրակի վրայով ցատկելը վերացրել է արգելքը, ինչից հետո երիտասարդներն իրավունք են ստացել այցելել ծնողների տուն: Այս է պատճառը, որ Տեառնընդառաջը ժողովրդական ավանդույթի համաձայն վերաբերում է նորապսակներին, ոչ թե նշանվածներին:

Համիկ ԹԱՄԱՅԱՆ

Հոգևոր տոները մեր պատերազմի Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բուհում նշվեց Տեառնընդառաջը



Տոնը համախմբել էր ուսանողներին, որոնք ժողովրդական ավանդությանը համահունչ կատարեցին Տեառնընդառաջի հիմնական ծեսը՝ խարույկ վառեցին, ժողովրդական երգ ու պարով պտտվեցին խարույկի շուրջը, ցատկեցին կրակի վրայով:

Ուսանողներին ներկայացվեց տոնի խորհուրդը, պատմությունն ու նշանակությունը, նրա հետ կապված տարբեր ավանդույթներ:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը կարևորեց տոնակատարությունը՝ ընդգծելով Հայ առաքելական եկեղեցու հետ համագործակցությունը ազգային արժեքների և ինքնության պահպանման տեսանկյունից:

Օրը կարևորվեց նաև եկեղեցական մեկ այլ տոնի նախօրեին. երիտասարդների արագահաս բարեխոս Սուրբ Սարգսի տոնին ընդառաջ՝ ՈւԼՄ-ի Մշակույթի հանձնաժողովի անդամները ներկաներին բաժանեցին իրենց ձեռքով պատրաստած աղաբլիթներն ու սիրո մասին հիշատակություններ պարունակող երկտողեր:

Ուսանողական խորհուրդն ամեն հնարավորն անում է, որպեսզի հոգևոր և այլ տոների արմատավորումը դառնա ուսումնական գործընթացի և ուսանողական առօրյայի կարևոր մասը:

